չի հաղորդում։ Վարդան պատմիչը ևս չի հաղորդում թվականը, այլ միայն բավականանում է նշելով, որ հալածանքը տեղի է ունեցել Ռոմանոսի ժամանակ և այնուհետև գրում է.

«Շինեաց և թագաւորն Աբաս զկաթուղիկէն ի Կարս գեղեցիկ յօրինուածով»[1]։

Կարսի Առաքելոց եկեղեցու շինությունը սկսվել է 930 և ավարտվել 942 թվականին[2]։ Նշանակում է, Բյուզանդիայից հալածված հոգևորականների տարբեր տեղերում կատարած շինությունները, որոնց թվում նաև Սանահնի Աստվածածին եկեղեցունը, այդ ժամանակ էր տեղի ունեցել։

Արդի ուսումնասիրողներից պատմաբան Կարապետ Կոստանյանցն ևս իր «Հայոց վանքերը» ուսումնասիրության մեջ Սանահնի հիմնարկությունը կապում է Բյուզանդիայից հալածված վարդապետների հետ։ Նա այդ վարդապետներին համարում է Սանահնի և մի շարք այլ վանքերի հիմնադիր և վերանորոգող[3]։

Սակայն, մի քանի պատմագիրներ, ինչպես Ասողիկը (10-րդ դարի վերջ և 11-ի սկիզբ), Սամուել Անեցին (12-րդ դ.), Մխիթար Այրիվանեցին (13-րդ դ.), որոնք մեկ առ մեկ նշել են այդ ժամանակներում շինված վանքերի անունները, ոչ մի բառ չեն ասել Սանահնի հիմնարկության մասին Աբաս թագավորի օրով[4]։

Հավանաբար այդ բանը նկատի ունենալով է, որ էջմիածնի «Արարատ» ամսագրում 1901 թ. լույս տեսած հոդվածի հեղինակ Եր. Ս.-ն Աբաս թագավորի օրով կատարված կառուցումների մասին եղած տեղեկությունները սխալ է համարում[5]։

Մեր կարծիքով, Սանահնի Աստվածածին եկեղեցին անպայմանորեն ավելի հին է, քան Ամենափրկիչը, որ կառուցվել է դարձյալ 10-րդ դարի երկրորդ կեսին։ Աստվածածին եկեղեցին պետք է կառուցված լինի 10-րդ դարի առաջին կեսին, Աբաս թագավորի ժամանակ, մանավանդ որ Գանձակեցու և Վարդան վարդապետի տված տեղեկությունները հաստատվում են տեղում գոյություն ունեցող շենքի առկայությամբ, որի կառուցման մասին մինչև այսօր որևէ այլ տեղեկություն կամ կարծիք չեն հայտնել ո՛չ հին մատենագիրները և ո՛չ էլ արդի ուսումնասիրողները։ Իսկ Ասողիկի, Սամուել Անեցու և Այրիվանեցու լռությունը այդ մասին պետք է բացատրել նրանով, որ նրանք վանքի հիմնադրությունը հաշվում են Ամենափրկիչ եկեղեցու կառուցումից, որովհետև այդ ժամանակ էր, որ Սանահինը մտավ հայոց նշանավոր վանքերի շարքը։

Սանահնի վանքի հիմնարկությունը Աշոտ Ողորմածի ժամանակներին են վերագրում հին մատենագիրներից շատերը։ Այդպես են գրել Ասողիկը, Սամուել Անեցին, Մխիթար Այրիվանեցին, Ստեփանոս Օրբելյանը։ Նույն բանը հաստատվում է նաև արքայական մի հրովարտակով, որ մեջ ենք բերել մեր այս ժողովածուում իբրև արձանագրություն՝ 189 համարի տակ։

Դեպքերին գրեթե ժամանակակից Ասողիկը Սանահնի վանքի հիմնարկությունը վերագրում է Բագրատունյաց Աշոտ Գ Ողորմածին, որ թագավորել է 953—977 թթ.։ Այդ մասին նա գրում է.

«Յաւուրս սորա (Աշոտոյ որդւոյ Աբասայ) շինեցան կրօնաւորանոցք, ճգնաւորականաց տեղիք Սեաւորդեաց աշխարհին, հաւասարակեացք, միաբանականք, ըստ յառաջասացեալ կանոնին սահմանա-

[1] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 88։

[2] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների Բ ժողովածու, Երևան, 1948, էջ 133։

[3] Կ. Կոստանյանց, Հայոց վանքերը, Մոսկվա, 1886, էջ 43։

[4] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, բ տպ., Ս. Պետերբուրգ, 1885, էջ 173—176, Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքումունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 99, Մխիթար Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց, Մոսկվա, 1860, էջ 56։

Ասողիկն իր Պատմության վերոհիշյալ էջերում նկարագրում է Կամրջաձորի, Հոռոմոսի, Նարեկավանքի, Դերջանի՝ Խլաձորի վանքի, Կարնո՝ Հնձուց վանքի, Շիրակի՝ Դպրեվանքի, Արշարունյաց գավառի՝ Կապուտքարի վանքի, Վայոց ձորի՝ Ցախացքարի վանքի հիմնադրությունը և տալիս է նույնիսկ նրանցից շատերի հիմնադիր առաջնորդների և նրանց հաջորդների անունները, բայց ոչ մի խոսք չի ասում Սանահնի մասին։ Անեցին և Այրիվանեցին, օգտվելով Ասողիկից, նույն վանքերի հիմնարկության մասին գրել են ավելի համառոտակի կերպով։

[5] «Արարատ», 1901, էջ 271—273։